

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՍՏԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ**

- Առևտրային վարկի տրամադրման դիմում՝ ներառյալ ֆինանսավորման նպատակը, ծախսման ուղղությունները և գումարները
- Ընդհանուր ժողովի կամ միակ բաժնետիրոջ/մասնակցի որոշման արձանագրության քաղվածք՝ ֆինանսավորում ստանալու և գրավադրվող գույքի վերաբերյալ
- Կանոնադրություն, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անձնագիր
- Պետական գրանցման վկայական
- ՀՎՀՀ (հարկային կոդ)
- Հիմնադիրների/մասնակիցների, Տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրերը
- Տեղեկանք այլ ընկերություններում ընկերության և հիմնադիրների/մասնակիցների բաժնեմասերի/բաժնետոմսերի վերաբերյալ
- Տեղեկանք հարկային և սոցիալական ապահովության վճարների մասով պարտավորությունների վերաբերյալ
- Գործունեության ծավալման վայրի սեփականության կամ վարձակալության վկայական, ֆիզիկական անձի դեպքում՝ նաև տեղեկանք բնակության վայրից
- Արտոնագրված/լիցենզավորված գործունեության դեպքում՝ արտոնագրեր/լիցենզիա
- Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ գույք, հիմնական միջոցներ, շարժական գույք, ապրանքանյութական արժեքներ և այլն) սեփականության իրավունքի ծագման հիմքերը (առուվաճառքի պայմանագիր և այլն) և սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր /սեփ. վկայականներ, իսկ ավտոմեքենաների և սարքավորումների դեպքում՝ տեխ. անձնագրերի բնօրինակները/
- Բիզնես պլան (ներառյալ ժամկետները, նպատակը, ծախսերը)
- Առաջարկվող գրավի գնահատման /վերագնահատման/ ակտ կամ արժեքի որոշման հիմք
- Ֆիզիկական անձ գրավատուների, Երաշխավորողների դեպքում՝ վերջիններիս անձնագրերը
- Անհատ ձեռներեց Վարկառուների դեպքում՝ 3-րդ ձև
- Ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր/տվյալներ
- Վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը (Ձև 1,2,3,4)՝ անհրաժեշտության դեպքում հարկային տեսչության կողմից հաստատված կամ աուդիտորական եզրակացությամբ
- Վճարունակությունը և/կամ եկամտի աղբյուրը հավաստող այլ փաստաթղթեր՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի դեպքում
- Հիմնական միջոցների ցանկ՝ ներառյալ քանակը, բալանսային արժեքը և ձեռքբերման տարեթիվը
- Դրամարկղի շարժ՝ կախված ֆինանսավորման ձևից պահանջվում է համապատասխան ժամանակահատվածի համար
- Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մնացորդ, ըստ դեբիտորների և կրեդիտորների անվանացանկի՝ համապատասխանաբար առաջացման և մարման ժամկետները
- Ապրանքանյութական պաշարների վերաբերյալ տեղեկանք

- Արտադրության տարեկան ծավալների վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ամիսների՝ կախված ֆինանսավորման ձևից պահանջվում է համապատասխան ժամանակահատվածի համար
- Արտադրանքի իրացման և/կամ ծառայության մատուցման տարեկան ծավալներ՝ ըստ ամիսների՝ կախված ֆինանսավորման ձևից պահանջվում է համապատասխան ժամանակահատվածի համար
- Իրացված ծավալների դիմաց դրամական մուտքեր՝ ըստ ամիսների՝ կախված ֆինանսավորման ձևից պահանջվում է համապատասխան ժամանակահատվածի համար
- Ծախսեր ըստ հոդվածների և ըստ ամիսների՝ կախված ֆինանսավորման ձևից պահանջվում է համապատասխան ժամանակահատվածի համար
- Պայմանագրերի, հայտ-պատվերների, հաշիվ-ապրանքագրերի, վաճառքների կանոնավոր գործընթացը հավաստող այլ փաստաթղթեր
- Կանխատեսումներ (ֆինանսական հոսքեր, գործունեության ընդլայնում և այլն)
- Բանկային հաշիվների շարժը (նախորդ տարվա և ընթացիկ ժամանակաշրջանի համար)
- Այլ բանկերում գործող վարկերի վերաբերյալ տեղեկանք (մնացորդը, մարման ժամկետը)
- Հարկ եղած դեպքում պահաջել նաև իրական շրջանառությունը, աշխատողների թվաքանակը, գործընկերների և մատակարարների հետ կնքված պայմանագրերի պատճենները
- Անհրաժեշտության դեպքում երաշխավորություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից
- Ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր/տվյալներ
- Տեղեկանք համապատասխան մարմնի կողմից, որը պետք է ընդգրկի տեղեկություններ՝ ա/ բաժնեմասերի սեփականության վերաբերյալ՝
  - ✓ ՄՊԸ-ի դեպքում՝ պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված
  - ✓ Բաժնետիրական ընկերության դեպքում՝ թողարկված բաժնեմասերի սեփականատերերի ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպության կողմից տրված
- բ/ կանոնադրության վերջին փոփոխության վերաբերյալ
  - Գրավի ապահովագրության վերաբերյալ փաստաթղթեր, ապահովագրավճարի անդորրագրեր (ապահովագրության պահանջի դեպքում)
  - Կադաստրի պետական տարածքային ստորաբաժանումների կողմից տրված միասնական տեղեկանք՝ գրավադրվող անշարժ գույքի վերաբերյալ
  - Տեղեկանք ՊԱՏ-ից գրավադրվող մեքենայի արգելանքի կամ դրա բացակայության վերաբերյալ
  - Անհատ ձեռներեցի դեպքում ամուսնական կարգավիճակը հավաստող փաստաթուղթ (ամուսնության, ամուսնալուծության, ամուսնու մահվան վկայականներ) և այլն (առկայության դեպքում), երեխաների ծննդյան վկայականներ (առկայության դեպքում)
  - Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Վարկային կազմակերպությունը: